

**«2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ
ԵՐՐՈՐԴ ՓՈԽԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ**

1. Հարկվող շահույթը որոշելիս՝ ակտիվները և պարտավորությունները՞ր դեպքում չեն հաշվառվում սկզբնական արժեքով՝

ա)բոլոր դեպքերում հաշվառվում են սկզբնական արժեքով.

բ) երբ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվել է վերագնահատում.

գ)հաշվառվում են համաձայն կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ:

2. Գործարքն անվավեր ճանաչելու հետևանքով գործարքի մյուս կողմին վերադարձվող միջոցների գումարը՝

ա) հարկվող շահույթը որոշելիս նվազեցվում է համախառն եկամտից.

բ) համարվում է ներված պարտավորություն և ենթակա է հարկման՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

գ)անվավեր ճանաչված գործարքի մասով կողմերը ճանաչում են եկամուտ՝ որպես նախկինում կատարված գործարքի արդյունք:

3. Եթե ֆիզիկական անձը անհատ ձեռնարկատիրոջը անհատույց տրամադրել է իրեն սեփականություն հանդիսացող անշարժ գույք, ապա՝

ա) Ա/Զ-ի մոտ տվյալ գույքի կադաստրային արժեքի տարեկան 5 տոկոսի մասով կառաջանա ներված պարտավորություն.

բ) վարձատուի մոտ տվյալ գույքի կադաստրային արժեքի տարեկան 5 տոկոսի մասով կառաջանա եկամտային հարկի վճարման պարտավորություն.

գ) որևէ կողմի մոտ հարկային պարտավորություն չի առաջանա:

4. Եթե շրջանառության հարկ վճարող կազմակերպությունը 2017թ.-ի մարտ ամսին ներմուծել է ԱՏԳԱԱ 8419 գույք, որի կադաստրային արժեքը կազմել 102 մլն. դրամ, երբ է առաջանում ԱԱՀ-ի վճարման պարտականություն՝

ա)մինչև 20 ապրիլի 2017թ.

բ)մինչև 20 ապրիլի 2018թ.

գ)մինչև 20 ապրիլի 2019թ.:

5.Եկամուտը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ՝

ա) տեղի է ունեցել ապագա տնտեսական օգուտների աճ՝ կապված ակտիվների աճի կամ պարտավորությունների նվազման հետ, որոնք կարող են արժանահավատորեն չափվել.

բ) գնորդին է փոխանցվել վաճառված արտադրանքի սեփականության իրավունքը.

գ) ստացվել է համապատասխան վճարումը.

դ) վաճառքը փաստացի տեղի է ունեցել:

6.Նշվածներից ո՞րը չի համարվում որպես աշխատակիցներին հատուցում՝

ա) փոխհատուցելի բացակայությունները (օրինակ՝ արձակուրդային վճարը).

բ) շահույթի բաշխումները.

գ) բնակարանով անվճար կամ մասնակի վճարմամբ ապահովումը (օրինակ՝ անվճար հանրակացարանը).

դ) բոլոր նշվածներն էլ կհամարվեն որպես աշխատակիցներին հատուցում:

7.Ֆինանսական միջոցների վերագնահատման նպատակով իրական արժեքը պետք է որոշվի՝

ա) պարտադիր գործող շուկայի հիման վրա.

բ) պարտադիր համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից .

գ) պարտադիր վերջին գործարքի գնի հիման վրա.

դ) նշված բոլոր պատասխաններն էլ սխալ են:

8 .Իրենից ձեռքբերում ներկայացնող ձեռնարկատիրական գործունեության միավորումից առաջացող հետաձգված հարկի գումարները՝

ա) պարտադիր ճանաչվում են անմիջականորեն սեփական կապիտալում.

բ) պարտադիր ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ նվազեցվելով շահութահարկի հաշվարկման նպատակներով.

գ) հաշվի են առնվում է գուղվիլի (բացասական գուղվիլի) արժեքը որոշելիս.

դ) պարտադիր ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, սակայն շահութահարկի հաշվարկման նպատակներով չեն նվազեցվում:

9.Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով չվաստակած ֆինանսական եկամտի արտացոլում՝

ա) Դեբետ 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր»

Կրեդիտ 627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ».

բ) Դեբետ 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր»

Կրեդիտ 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով».

գ) Դեբետ 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»

Կրեդիտ 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր»:

10. Պաշարների արժեքի՝ նախկինում կատարված նվազեցումների վերականգնում

ա) Դեբետ 218 «Պաշարների արժեքի նվազում»

Կրեդիտ 614 «Գործառնական այլ եկամուտներ».

բ) Դեբետ 215 «Արտադրանք»

Կրեդիտ 218 «Պաշարների արժեքի նվազում».

գ) Դեբետ 218 «Պաշարների արժեքի նվազում»

Կրեդիտ 215 «Արտադրանք»:

11. Հաստոցի գծով մաշվածության հաշվարկմանը զուգընթաց վերագնահատումից արժեքի աճի վերագրումը սեփական կապիտալի այլ հոդվածին՝

ա) Դեբետ 111 «Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ»

Կրեդիտ 321 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ».

բ) Դեբետ 321 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»

Կրեդիտ 342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)».

գ) Դեբետ 321 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»

Կրեդիտ 331 «Ֆինանսական արդյունք»:

12. Սահմանված հատուցումների պլանի գծով անցյալ ծառայության արժեքի բացասական աճի արտացոլում՝ երաշխավորված հատուցումների գծով՝

ա) Դեբետ 713 «Վարչական ծախսեր»

Կրեդիտ 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը».

բ) Դեբետ 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը»

Կրեդիտ 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ».

գ) Դեբետ 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը»

Կրեդիտ 713 «Վարչական ծախսեր»:

13. Հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների ընթացիկ հարկայն պարտավորություններով հաշվանցման արտացոլում՝

ա) Դեբետ 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին»

Կրեդիտ 226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր».

բ) Դեբետ 225 «Կարճաժամկետ դեբիտորական պարտք բյուջեին»

Կրեդիտ 226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր».

գ) Դեբետ 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին»
Կրեդիտ 225 «Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով»:

14. Էլեկտրաէներգիա մատակարարող կազմակերպությունների կողմից առաքված էլեկտրաէներգիայի դիմաց պարտքի մարում՝

ա) Դեբետ 252 «Հաշվարկային հաշիվ»

Կրեդիտ 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով».

բ) Դեբետ 252 «Հաշվարկային հաշիվ»

Կրեդիտ 611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ».

գ) Դեբետ 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»

Կրեդիտ 611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»:

15. Ինքնարժեքից անկացած իջեցման գումար՝ մինչև կրացման գումար ժեք ճանաչվում է որպես՝

ա) ծախսային ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը.

բ) ծախսային ժամանակաշրջանում, երբ կատարվել է իրացումը:

**«2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ
ԵՐՐՈՐԴ ՓՈԽԻ ԽՆԴՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ**

«Ի ԷՅՋ» ՍՊԸ-ն հանդիսանում է շինանյութի մանրա-մեծածախ վաճառքով զբաղվող Կազմակերպություն, որը հիմնադրվել է 2014թ.-ին: Կազմակերպությունը հիմնադրման տարվանից աշխատել է շահույթով և շահաբաժինների բաշխում չի կատարվել: Հաշվետու տարվա արդյունքներով կազմակերպության գուտ ակտիվների մեծությունը կազմել է 900 հազ.դրամ:

Ընկերության հաշվապահական հաշվառման համակարգում 31.12.2016թ.-ի դրությամբ առկա են հետևյալ տվյալները.

	Եկամուտներ	Գումար /հազ. դրամ/	Գումար /հազ. դրամ/
1	Արտադրանքի իրացումից եկամուտ մեծածախ վաճառքից /առանց ԱԱՀ/	1 250 000	1 250 000
2	Արտադրանքի իրացումից եկամուտ մանրածախ վաճառք	900 000	749 970

3	ԱՄՆ-ում գտնվող անշարժ գույքի վարձակալությունից եկամուտ, որն ստացվել է ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձից	3800	3800
4	Հիմնադրին տրամադրված փոխառությունից տոկոսային եկամուտ	4200	4200
5	ՀՄ օտարումից եկամուտ /համակարգիչ/	1200	1200
6	Գույքի վարձակալությունից եկամուտ	800	800
7	Արտարժույթի փոխանակումից եկամուտ	60	60
	Ընդամենը		2 010 030

	Ծախսեր	Գումար /հազ. դրամ/	Գումար /հազ. դրամ/
1	Իրացված արտադրանքի ինքնարժեքը	1 580 000	1 580 000
2	Իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված՝ փաստաթղթերով չհիմնավորված նյութական ծախսեր՝ ներառյալ դրանց գծով հաշվարկված եկամտային հարկի գումար	37 586	36 000
3	ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունից ստացված փոխառության տոկոսային ծախս	6890	1800
4	ՀՀ տարածքից դուրս կատարված կադրերի վերապատրաստման ծախսեր (15 աշխատողի համար)	86000	15 000
5	Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ	33000	33 000
6	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ, որից- -հաշմանդամներին հաշվարկված աշխատավարձ -Ընկերության աշխատակիցների չօգտագործված արձակուրդի գծով ՖՀՄՄ-ներին համապատասխան ճանաչված պահուստ	72000 5200	108000
	Ընդամենը		1 773 800

Շահութահարկ՝ 47 246